ԱՐԱՐԱՏ

ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՑԻՆ ԿԱՂԱՓԱԿԱՆ ԵՒ ԱՅԼՆ

ԲԱԺԱՆԻՐԳԱԳՐՈՒԹԻՒՆ

Պարսկաստանի համար տարեկան 5 Ֆր. և կամ 2 ըրլ.-ոս. թղթդրմ.

Ուրիշ ամեն տեղի համար ուր այս լրագրի մուտքը արգիլուած չէ, տարեկան բաժնորդագինն է 20 Ֆր., վեցամսեայն 10 Ֆրանգ և եռամսեայն 5 Ֆրանգ։

Բաժնեգինները կանխիկ կը վճարուին և Տնօրէնութիւնն ինք կը վճարէ լրագիրը ղրկելու փոստի ծախքը։

Նամակ և ծրար պէտք է ղրկել հետեւեալ հասցէով. M. PORTOUKALIAN, rédacteur du journal *Arménia*. MARSEILLE (France)

Ջ ՏԱՐԻ ԹԻԻ 54

1891 ՄԱՐՏ 7

ՓԵՏՐՎԱՐ 23 (Հ. Տ.)

ԾԱՌԱՅ

Կը հրատարակուի Երք. և Շբթ. օրեր

ՊԱՏՄԱՆԵՆԵՐ

Խմբագրութիւնը, եթէ հարկ համարի, համառօտելով և կամ մասամբ միայն կը հրատարակէ իրեն ղրկուած գրութիւնները։

Պարտաւոր չէ վերադարձնել չհրատարակուած ձեռագիրները։

Գանուցումներ կընդունուին հայերէն և ֆրանսերէն լեզուով։

Գանուցման 1 միջակ գիրը 1 սանդիմ կարժէ. 1 գլխագիրը 2 սանդիմ։

Les annonces, en français et en arménien, sont reçues aux bureaux de la Rédaction (Allées de Meilhan, 44.)

ՀԱՅՈՑ ՀԱՅՐԵՆԱՍԻՐԱԿԱՆ ՄԻՈՒԹԻՒՆ

ՆՊԱՏԱԿ ԵՒ ՄԻՋՈՑՆԵՐ

(Գաղուած կանոնագրէն)

«Հայոց Հայրենասիրական Միութեան» նպատակն է աշխատիլ վարչական բարենորոգումներ մուցնելու Թիւրքահայաստանի մէջ, Հայ ժողովրդի տեղական պէտքերին համեմատ։ Հայ ժողովրդի ցանկութիւնն է իրաւունք ստանալ ազատօրէն ինքզինք կառավարելու որով միայն պիտի կրնան վերնալ այն հարստահարութիւնները որոնք այսօր Հայաստանի թշուառութեան և աւերակ դառնալուն պատճառ կը լինին։

«Հայոց Հայրենասիրական Միութիւն»ը իւր նպատակ իրագործելու համար իւր կարողութեան չափով կը գործադրէ ամեն յարմար եղած միջոցներն, ժամանակի պահանջներին համեմատ կաշխատի ներքին այժ գոյացունել Աղգին մէջ իւր ազատութեան համար, հրատարակութիւններ կանէ, դիմումներ կանէ որոց որ պէտք է և նիւթապէս ու բարոյապէս կը փոխադրէ անոնց որոնք անձնուիրութեամբ կաշխատին հայրենիքի ազատութեան գործին։

Միութիւնը կունենայ իրեն բերան եղող լրագիր որ, բացի զանազան լուրեր տալէ իրեւ լրագիր, կը հաղորդէ ընդհանրութեան ինչ որ Միութիւնը ուզէ հաղորդել, տեղեկութիւններ կուտայ Հայաստանի և տարբնակ Հայերի դրութեան վրայ և կը ծառայէ հայրենասիրական եռանդը արծարծելու Հայերին մէջ։*

Ծանօթ. «Հայոց Հայրենասիրական Միութեան» անդամակցիլ կամ թղթակցիլ ուզողներն պէտք է դիմեն հետեւեալ հասցէին.

M. Portoukalian

(FRANCE) Marseille

* Հայոց Հայրենասիրական Միութիւն»ը կը նպատակ Արմենիա լրագրի հրատարակման։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Պոռատախօսութիւն.—Հայ մշակները.—Սուչաւահ Հայերը.—Վեհ. Մակար կաթողիկոս.—Ռուսահպատակ Հայեր ի Կ. Պոլիս.—Տ. Սուքիասի մահը.—Օտար բղեղակիցներ ի Հայաստան.—Հայեր ի Փարիզ.—Կապոյտ տետրակը.—Պետական դրամատուն.—Գանուցումներ.—Բանասիրական (Զրոյցներ)։

ՊՈՌՈՏԱԽՕՍՈՒԹԻՒՆ

Ռուսահպանակ մեր մի թղթակից ռուս մամուլի հրատարակութիւններին վրայ արուած տեղեկութիւնները սր գրած ենք Արմենիայի նախորդ թիւին մէջ, մասնաւոր ուշադրութեան արժանի են։ Ռուս մամուլը սկսած է Պարսկաստանին ալ անտեղի կասկածներ ներշնչել և ճնշտակար թելադրութիւններ անել հայ ժողովրդին նկատմամբ։ Պարսիկ կառավարութիւնն որ լաւ կը ճանչէ Հայերն և երկար դարերէ ի վեր գործունեցած է անոնց հետ, անշուշտ պէտք չունի մի օտար մամուլի անտեղի խորհուրդներին և ինք գիտէ ու կը հասկնայ թէ Հայերին հետ լաւ վարուելուն մէջ ինք մեծ շահեր ունի որոց վրայ նախանձով կը նային այժմ Ռուսեր։ Բայց ռուս լրագիրներուն այդ յուղումն

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԶՐՈՑՆԵՐ

— Քո տունդ չքանդուի՛, կօշկակար Գասպա՛ր, ելը էս չարաթ լրագիրս չբստացայ, չեմ գիտում թէ դա ի՞նչպէս խմբագիր կամ վարչութիւն է որ մի չարաթ ուղարկում է, իսկ մի չարաթ չի ուղարկում։ Գնացի փոստան, որքան մանեկայ, լրագիրս չկար։ Նա՛, դուք ձեր Աստուած, սա էլ բան է՛ որ իմ գլխիս բերում են. ամենից կանխիկ դրամ տուր, բայց ապառիկ լրագիր ստացի՛ր. Թո՛ւ, Թո՛ւ։

— Ելը ի՞նչ կայ, նախրչի Միխո՛, որ այդպէս բարկացել ես։

— Ապե՛ր, չանը՛մ, կէօզը՛մ, ես կանխիկ դրամ եմ տուած որ ինձ համար լրագիր գայ, Արմենիա և Մշակ գայ. հիմա տեսնում եմ որ ամենին կայ բայց ինձ չկայ։ Դէ՛ եկ դու մի՛ հայհոյեր, համբերիր և էս չարաթ առանց մի լուրի դիմացիր։ Հիմա ցաւս այս անգամի համար չէ. ես մտածում եմ որ եկ տես եկող չարաթ էլ չլինի, էն ժամանակ պիտի չբներին կապեն և Միխոին բացեն։ Չեմ իմանում, եղբա՛յր, չեմ իմանում թէ սա ի՞նչպէս բան է։ Տարեկան ընդ ամենը իմ դառնում է 50 մանէթ. դրա 12 մանէթը տուր լրագիր ա՛ռ, կարդա՛ որ բան

թշնամական վարմունք որ գուցէ կարենայ մինչեւ մի աստիճան ճնշում բանեցունել պարսիկ կառավարութեան դէպի Հայերն ցոյց տուած բարեացակամութեան վրայ, մեր մի քանի հայ գործիչների թեթեւամիտ և անխորհուրդ վարմունքի հետեւանքն եղած է նաեւ։

Մի ժամանակէ ի վեր Պարսկաստանէն մեզ կը տեղեկացունէին արդէն թէ այս կամ այն կուսակցութեան անունով գործիչներ սկսած են գնալ այնտեղ ոմանք «Հայոց Հայրենասիրական Միութեան» և Արմենիայի բարեկամ ձեւանալով ի սկզբան, մուտ կը գտնեն ժողովրդին մէջ և յետոյ իրենց դիմակ վարառնելով կսկսին անոնց հակառակորդ ներկայանալ և պռոտոտախօսութիւններ անել թէ իրենք մեծ մեծ գործեր կատարած են և թէ եկած են այս ինչ կամ այն ինչ մեծ գործն ալ կատարել ... Գործերը իրենց կեղծիքէն չդատող, այլ բուն ներքին մասը տեսնողները դիտեն թէ ատոնք ոչ մի մեծ գործ արած չունին և անելու ալ ընդունակութիւն չունին. երկարատես համբերութեամբ ուրիշների չինածները քանդելու միայն ընդունակ են ատոնք. բայց

գան այն է որ ատոնց պռոտոտախօսութիւնների ձայնը մինչեւ Թիֆլիզ և Պետերբուրգ հասած, քնացող օձերն ալ անհանգիստ անելով արթնցուցած և մինչեւ իսկ Հայերին բարեացակամ պարսիկ կառավարութիւն ալ դրդած է որ ոեւէ կուսակցութեան պատկանող օտարական Հայերն անխտիր կը հեռացունէ այժմ Ադրպատականէն և դիւրութիւններ ալ կուտայ թիւրք հիւպատոսին ձերբակալելու համար այնտեղ իւր հպատակները ...։

Ուրախալի է միայն որ Պարսկաստանի Հայերը աւելի լաւ հասկնալով Հայրենիքի շահերը և պահանջները, երես տուած չեն այդ պռոտոտախօսներին և հասկնալով ատոնց ազգայնասիրութիւնը, չենուզած անոնց հետեւելով կուսակցութիւնների բաժնուիլ մինչդեռ եւրոպահայ գաղթականութիւնն ներին մէջ գտնուած են մի մաս բոլորովին տգէտ և սկզբունք չունեցող Հայեր որ այդ պռոտոտախօսների ձայնին դիւրահաւատութեամբ հետեւելով, անունդ և այժ տուած են անոնց կուսակցական կիրքերի և հետեւապէս իրենք ալ անգիտակցաբար ծառայած են ազգին ջնաս հասցունելու։ Այդպիսի-

---

Հասկանաս, նա էլ չեն ուղարկում. Գալիս կարում են, ոտքից կարում են, բերում են քեզ մի անգլուխ և անօտ լրագիր են տալիս։

— Միխո՛, եթէ մի լաւ գէր գառն տաս ինձ, ես պիտի ասեմ թէ քո լրագիրները ի՞նչ են լինում։

— Դէ կորսուի՛ր դու էլ յիմար. լա՛ւ. պա քո լրագիրդ ի՞նչ էր եղած որ էն չարաթ այնպէս հայհոյում էիր։

— Հէնց էն չարաթ հասկացայ թէ իմ լրագիրներիս գլխին ի՞նչ քար է ընկնում և այն օրից վարպետ եմ եղած. հիմա եթէ գէր գառն տա՛ս, պիտի քո լրագիրներիդ համար էլ ասեմ։

— Դէ՛ լաւ, հա՛. գառան տեղ տաքցոց ուտես, կը տամ. դէ ասա տեսնեմ թէ իմ լրագիրներս ի՞նչ են լինում։

— Քո լրագիրներդ ամէն չարաթ խմբագրութիւնից ուղարկվում են. բայց նրանք որ փոստան չուտ են գնում, նրանք են բերում։ Դու լաւ գիտես որ մեր երկրի փոստան ամենից չուտ գնացողի համար եկած կը լինի։

— Նրանք ո՞վ։

— Նրանք հա՛.....։

— վա՛յ ձեր խերն եմ անիծի թէ որ այդպէս էլ բան կը լինի. հիմա ցաւ էս ցաւն է որ ում որ էլ ասես, պիտի չհաւատան, այնպէս որ քիչ է մնում որ ես էլ չհաւատամ թէ ի՞նչպէս կարելի է որ

մի մարդ տարեկան մինչեւ 7-800 մանէթ ծախսի գինու, ծխախոտի, թէյի, հանդերձի և ձեւերի, բայց մի 10-20 մանէթներ չծախսի լրագրի ընթերցանութեան։

— Էս չարաթուայ լրագրներից կարդացի՞ր։

— Ինչո՞ւ չէ. մեր փինաչի Սախօյի լրագրներն առի և կարդացի։

— Փինաչի Սախօյին տեսնես ինչո՞ւ էին բանտարկած։

— Պարտատէրերն էին բանտարկել տուել։

— Մի թէ՛ նա պարտական է։

— Ի՞նչպէս չէ. խեղճը 13 հոգուց ընտանիքի տէր է և բաւական էլ պարտքեր ունի։

— Ուրեմն ինչո՞ւ տարեկան 10-15 մանէթ լրագիր կարդալու համար ծախսեր է անում։

— Մեր հարուստների մեղայ քաւութեան համար. սրա հողը լինի մեր մի քանի հարուստների գլխին. տե՛ս սա իւր աղքատութեամբն, իսկ նրանք իրանց հարստութեամբը. ամո՛թ, չա՛տ ամօթ։

— Բայց չի կարելի ասել որ ամենն էլ այդպէս են։

— Ես չասացի թէ ամեն հարուստներն էլ այդպէս են, բայց թէ քանի՛սը այդպէս չեն, դժուար եմ գտնում։ Այս մեր հարուստներն ամեն կերպերով նմանե-

ՈՍՆԿՄԱՍԻ
(Վիզիտասմա)

— Ես, տիկին, ինչպե՞ս կարող եմ ձեզ հավատացնել, որ ես ձեզ չեմ խաբում։ Ես ձեզ ասում եմ ճշմարտությունը, ամենայն ճշմարտությունը և ոչ այլ ինչ։ Ես ձեզ ասում եմ, որ ես ձեզ սիրում եմ, ինչպես երբեք ոչ մի կին չի սիրել։ Ես ձեզ սիրում եմ, ինչպես ոչ մի կին չի կարող սիրել։ Ես ձեզ սիրում եմ, ինչպես ոչ մի կին չի

ժամ պատարագ կը լինի. Ծնացածները տարին մէկ երկու անգամ կը բացուին իրենց տօնի օրերը։ Այդ եկեղեցիներէ մին որ վանք կը կոչուի, քաղաքին ամենէն բարձր տեղը գրաւած է. ամրոցի ձեւ ունի և պարսպապատ է և իր կողերը ռումբի հարուածներ կրած են։ Մի քանի գարեր առաջ Թաթարների արշաւանքին ալ դիմացած և գոյն արհամարհած էր այդ հայկական չէնքը, վանքի տաճարին փայտէ գուռն Ա.ի քաղաքէն բերուած է գաղթականութեան ժամանակ։

Սուչաւայի Հայերը մի փոքր ովազիս կը կազմեն այն կողմերը չորցած և հեռու ղեկեռ չորնալու վրայ եղող Հայ գաղթականութիւններին մէջ։ Սուչաւացիներն Անի անուն ընկերութիւն մը հիմնած են, ընթերցարան ունին և Հայերը այդտեղ կը հաւաքուին կարդալու և զբօսնելու. գեղեցիկ օրինակ ուրիշ Հայ գաղթականութիւնների համար։ Առաջ Վարդերես Բրունգուլեան, մի համակրելի և բարեկիրթ ազնուական, որեւ կանոնաւոր կրթութիւն ստացած իրաւագէտ մ'է, Անի ընկերութեան մէջ նախագահի պաշտօնը կը վարէ և ինքն ալ ընթերցարանի գլխաւոր յաճախորդներէ մին է։ Ապագան այս բանով հակապատկեր մ'է ուրիշ տեղ գանուող մի շատ Հայերի ոգրանք եթէ քիչ մ'աւելի դրամ ունենան և կամ օտար մի լեզու սովրած լինին, աւելի լաւ կը համարին օտար շրջաններու մի անկիւն մտնել, օտարներէ իրենց վրայ մի քանի խօսք լսելու պատեհութիւն փնտռել գնուած կերպով, քան թէ Հայ շրջանների մէջ մրտնել և իրենցարժանաւոր փայլ ցուցնել։ Բայոր Աւստրիոյ մէջ ասպետական կարգ 100 ընտանիքէ աւելի չկրնար շրջանառիլ Կայսրէն. Հայերը 2 ասպետական տուն ունին. Բրունգուլներ և Ջունդեր որոնք միեւնոյն ժամանակ մեծ կալուածատէրներ են։

Հայերն իրենց յատուկ մի վարժարան ալ ունին նախակրթական. Տնօրէնն է Պր. Գարբիել Գըլընեան, մի վաղեմի աշխատաւոր որ այժմ հանգստեան թոշակ ալ ունի։ Վարժարանի հայերէն լեզուի և եկեղեցականերաժշտութեան դասատու Պր. Դ. Լազարովիչ ալ մօտէն ճանչնալու առիթներ ունեցայ. հմուտ և աշխոյժ բնաւորութեան տէր մի անձ գտայ զինք և աւելի գնահատեցի իր արժանիք այն բանի համար մանաւանդ որ շատ կաշխատէր հայ լեզուն խնամով աւանդել իր աշակերտներուն և կրցածին չափ գոյն պահպանել գերմաներէնի և ռումաներէնի գօրաւոր հեղեղէն։ Ընթերցարանի զարգացման համար ալ եռանդուն աշխատողներէն է։ Ֆօքշանէ առնուած լուրերէ կիմանամ որ այնտեղի Հայեր ցանկութիւն ունին իրենց քահանայ ձեռնադրել տալ Պր. Գրիգոր Լազարովիչը։ Դժուար արժանի է Ֆօքշանցիներուն այդ մըտադրութիւն որով այդ կողմեր հայ արտով մի աւետաւ քահանայ ունեցած կը լինին։

Եթէ հնախօսի և հնագէտի արժանիքն ունենայի, շատ բան պիտի կրնայի գիտել և ուսումնասիրել այս գաղթականութեան մէջ որ տակաւին կը պահէ իր հաւերի և պապերի Հայաստանէն բերած չորթանը և որի ընտանիքներուն մէջ խօսուած հայերէնը մի մանաւանդ գաւառաբեղու կրներ. կայացուներ (Խրիմցիներու լեզուին բաւական մօտիկ) և որի մէջ ինձ անծանօթ մի շատ հայերէն բառեր և առումներ կը գտնէի։

Մ. Ա.

ՎԵՀ. ԿԱԹՈՂԻԿՈՍԸ

Լէմիածնէն կը գրեն որ Վեհ. Կաթողիկոսի հիւանդութիւնը բաւական մեղմացեր է։ Ճգնաժամը անցած կը համարուի. բժիշկները բացարձակ հանգիստ պատուիրած են Վեհափառին որպէս զի կարենայ իր ուժեր մի քիչ կազդուրել։ Լէմիածնէն կ. Պոլսի Պատրիարքարանը եկած մի ուրիշ հեռագիր ալ կը հաւաստէ որ Վեհ. Կաթողիկոսը բոլորովին առողջ է։

Ռուսահպատակ Հայեր ի կ. Պոլիս

Թիֆլիզի Նովոյե Աբազրէնիյէ լրագիրը կը հաղորդէ որ թիւրք կառավարութիւնը կուզէր կալանաւորել Պրն. Գրիգոր Նիկողոսեան որ վերջերս մի քանի տարիներէ ի վեր կ. Պոլիս կապրէր։ Պր. Գրիգոր Նիկողոսեան դիմելով կ. Պոլսի ռուս հիւպատոսարանին, ընդունած է նորա հովանաւորութիւն և այժմ կը պատրաստուի Պոլիսը թողուլ և կովկաս վերադառնալ։

Տ. ՍՈՒՔԻԱՍԻ ՄԱՀԸ

Կ. Պոլսի Հայոց Մայր-եկեղեցու ծերունի աւագերէց և լուսարարապետ Հոչակաւոր Սուքիաս քահանայ Ստեփաննոսեան որ Գումգափուի ցոյցին առթով սպաննելու փորձ արած էին մի քանի երիտասարդներ և որի պատճառով 10ի չափ Հայեր չղթայակապ աշխատութեան դատապարտուելով աքսորուեցան, վերջապէս փետր. 14/26ին մեռեր է բնական մահով։ Հոգեւորականներն ըստ սովորականին մեծ չքով կատարած են անոր յուղարկաւորութիւն հետեւեալ օրը, Հանդիսապետութեամբ Ա.մեն. Աշըղեան պատրիարքին։

Օտար թղթակիցներ ի Հայաստան

Լոնտոնի L'Arménie լրագրին մէջ հետեւեալը կը կարդանք. Մանչիսթըր Եկզամիներ պահպանողական թերթը այս օրերս մի մասնաւոր թղթակից ղրկեց Աբեւելք, «Հայաստանի գործերին աւելի ճիշդ կերպով» տեղեկանալու համար։ Այդ թղթակից կ. Պոլսէն անցած ատեն Թիւրքերի արտաքին գործերի նախարարէն և Մեծ Վէզիրէն չորս քորթիչ պատուիրերով ընդունուեր է և Սէլամլըղի արարողութեան ալ ներկայ գտնուելով Սուլթանին բարեւներն ընդունած է նորա մի սենեկապետի միջոցով որ միեւնոյն ժամանակ իրեն յանձնարարագրեր տուած է ուղղել Տրապիզոնի և Էրզրումի վալիներին։»

— Մշակ լրագիրն ալ կը հաղորդէ որ Պետերբուրգի Նովոյե Վրեմիա լրագիրը յատուկ մի թղթակից կուզարկէ Թիւրքահայաստան, այնտեղէն թղթակցելու համար։ Այդ թղթակից լինելու է Պրն. Ամֆի որ այժմ արդէն Թիֆլիզի Նովոյե Աբազրէնիյէ լրագրի աշխատակիցն է։

ՀԱՑԵՐ Ի ՓԱՐԻԶ

Փարիզի Հայ գաղթականութեան նոր բացուած մատուռի առաջամանակեայ Հոգաբարձութիւնն հրաժարած լինելով, գաղթականութեան անդամներէն 200ի չափ անձի հրաւիրագիր ղրկուեր է նոր ընտրութեան համար։ 44 անձ միայն պատասխանելով այդ հրաւէրի, եկած են ժողովի և իրենց քուէներուն բացարձակ առաւելութեամբըն կազմուած է նոր Հոգաբարձութիւնն հետեւեալներէն. Բարձր. Իշխան Գուրեան Լուսինեան, Վսեմ. Լեւոն պէկ Գափամաճեան և Մեծ. Տեարք Ռ. Մարկոսեան, Ա. Էգնայեան և Ե. Շնորհքեան։

ԿԱՊՈՑ ՏԵՏՐԱԿԸ

(Շար. 53րդ թուհն)

Թիւ 68

Հիւպատոս Ք. Լոյտ առ անգլիական դեսպանատունն.

Էրզրում, 28 յունիս 90

Իբր չարունակութիւն ամսիս 20ին Ձեզ ղրկած տեղեկագրիս, պատիւ ունիմ հաղորդել Ձեզ նորագոյն քննութիւններիս արդիւնքը, նոյն օրը պատահած խռովութեան մասին։

Էրզրումի գօրաբանակի հրամանատարը իր ստացած մի անստորագիր նամակ հաղորդած էր կ. Պոլիս և այդ բանի վրայ էր որ այն տեղէն հեռագրով հրաման եկած էր կուսակալին, խուզարկութիւններ անել Առաքնորդարանի եկեղեցուն և Սանասարեան վարժարանին մէջ. բան մ'որ վերին աստիճանի գրգռեց քրիստոնեայ ժողովրդին ըզգացումներն և պատճառ եղաւ խռովութեանն։ Հայերը իրրեւ մի բազոք գոցեր էին իրենց խանութներ և վարժարաններ և երբ նոյն օրը մի քանի խանութպաններ Կուսակալի հրամանի և Առաքնորդի խրատին վրայ բացեր էին իրենց խանութներ, մի քանի եւրիտասարդ Հայերէ յարձակում կրեցին. այդ ժամանակ խանութպաններին գըբացի Թիւրքերը սկսեցին զանոնք պաշտպանել, միւսլիման ամբոխ մը ըսկսաւ հաւաքուիլ և արդէն ադով ըսկսուած էր խռովութիւնը։

Այնուհետեւ Հայերի կողմէն մուրիշ փորձ եղաւ իրենց Առաքնորդին վրայ սպառնալու որով սա ստիպուեցաւ Թիւրք գօրքեր կանչել զինք պահպանելու համար։ Այս պահուս Վալին որ ընդարձակ փորձառութիւն ունեցող մի զինուորական է և միեւնոյն ժամանակ լուրջ դատողութեան տէր մի անձ, իսկոյն քաղաքի չորս կողմը գօրքի վաշտերով բռնել տուաւ որպէս զի ոեւէ անկարգութեան առաջքն առնել կարելի լինի։ Ժամը 3½ին հրաման ըսաւ որ գօրքի ուրիշ վաշտեր հիւպատոսարաններուն և քրիստոնեաներուն թաղերը պաշտպանելու ղրկուին։ Վաշտերը մեկնեցան հիւպատոսարանների կողմն երթալու, սակայն սխալմամբ ադոնցմէ ոչ մին դէպի մեր հիւպատոսարան եկաւ, ուրկէ, իրրեւ մի կեդրոն տեղէ, աւելի յաջող կերպով պիտի կարենային կատարել իրենց պաշտպանութեան գործը։ Այսպէս ուրեմն Ն. Վսեմութեան (Վալիին) հրամաններն չգործադրուեցան ի մասին քրիստոնեայ թաղերի պահպանութեան։

Միեւնոյն ժամանակ, 2–300 Հայեր ալ եկեղեցու չուրջը հաւաքուած խոզհուրդ կանէին, ինչպէս որ կը խօսուէր, թէ ինչ ձեւով բողոք պատրաստեն Վեհ. Սուլթանին տալու համար։ Միւսլիման ամբոխն հաւաքուելու վրայ էը խոշոր բերներով զինուած, և ամբոխին մէջէն շատերն ալ իրենց հանդերձներէ տակ սուրեր և ատրճանակներ կը կրէին։

Թէ՛ Հայերէ և թէ՛ պաշտօնական անձերէ ինձ հասած տեղեկութիւնները խնամով քննեցի, նոյնպէս անկախ անձերի (ոչ Հայ և ոչ Թիւրք) ալ դիմեցի, տեղեկութիւններս ստուգելու համար որով ներկայ տեղեկագիրս պատահած դէպքերին ճշգրիտ նկարագրութիւնն կը լինի։

Վալին մի վաշտ զօրք ղրկած էը Առաքնորդարանի եկեղեցուն չուրջը, իբր թէ Առաքնորդի խնդրանքին վրայթէեւ վերջինս կը յայտնէ որ ինք միայն մի փոքր թուով զօրք ուզած է լոկ այն խանութպաններ պաշտպանելու համար որպէս զի ատոնք կարենային իրենց խանութներ բանալ, ինչպէս ոչ ինքն ալ յորդորած էր ժողովրդին։ Այդ կէտ այնչափ կարեւոր չէ՝ ինչ իրը սա է որ, և ես այսպէս կընկատեմ, Վալին զօրքերը ղրկեր է այն նպատակութեամբ որ Հայերի բազմութիւնը մի յարձակում չկրէ քաղաքէ ատորին կարգի միւսլիմաններէն։ Ղըրկուած վաշտը լաւ կրթուած մի զօրաթուր էր և հրամանատարն ալ Զերքէզ մ'էը որ իւր մեծերի վստահութիւնը կը վայելէը։ Կուսակալը զոյն ղրկած ատեն պատուիրած էր իրեն որ ինչ ալ պատահի, երբէք կրակ չանէ ոչ քրիստոնեաներուն և ոչ ալ միւսլիմաններէն վրայ։ Կուսակալը այդ պատուէր անձամբ անելէ ետք, դարձեալ անոր ետեւէն քանի անգամներ ալ ղրկած էը զինուորականներ որ կրկնեն իրեն նոյն հրաման։ (Ա.յս կէտ ամենավստահելի և անկախ անձերէ ալ ստուգեցի)։ Թէեւ յետոյ պատահածին նայելով, այս պատուէրները քիչ մը չափազանց խիստ բնաւորութիւն մ'ունենալ երեւցան։ Սակայն կրնամ վստահ կերպով նշանակել այս բան որ Ն. Վսեմութիւն այդ հրամաններ տալով, ցուցուց որ իր փափագն է թէ՛ քրիստոնեաները պաշտպանել և թէ՛ մեծ արիւնհեղութիւն մը արգիլել։

Վաշտին հրամանատարը եկեղեցու մօտիկ հասնելով, հրամայեց միւսլիման ամբոխին քիչ մը ետ քաշուիլ և զօրախումբեր զետեղեց ամբոխին մէջ անոր վրայ հսկելու համար։ Այստեղ կրնայ մի քիչ մոռնալ թէ հրամանատարը պարտաւոր էր անմիջապես ցրուել ամբոխը, մանաւանդ որ այդ բազմութիւն կազմուած էր քաղաքին ամենկոզմէ եկած դատարկաչրջիկներէն և ա.

րոնք բիրեր ունէին և հաւանօրէն մեղադարտ դիտաւորութիւն մը կը տածէին։ Եւրոպական մի քաղաքի մէջ ուր փողոցները լայն են, ոստիկանական լաւ կարգադրութիւններ կան և օդնութիւն շատով կրնայ հասնիլ. այդտեղերը այդպիսի գործողութիւն մը քիչ մը դժուար կրնար յանձնարարուիլ. սակայն արեւելեան քաղաքների մէջ ուր բոլորովին տարբեր հանգամանքներ կը գտնուին, իմ կարծիքով, անիոյիտ վտանգ մ'էր հրամանատարին արածը որ կրնար աղետալի հետեւանքներ ունենալ։

Տեսնելով որ քանի ուշանար, գործերի դրութիւնը աւելի սպառնական կը գառնար և թէ մէկ կողմէն Հայերը եկեղեցւոյ մէջ և Թիւրքերը դուրսը հեռվհեռէ աւելի կը գրգռուէին, հրամանատարը որոշեց մտնել եկեղեցին։ 20 հոգի հետ առնելով ներս մտաւ և բարեկամական կերպով, «զաւակներս» կոչելով, հաւաքուածներին հրաւիրեց որ գուրս ելնեն, տուներնին երթան. քանի մը վայրկենէ ետք դարձեալ մըտաւ և կրկնեց իր պատուէրը։ Հայերի պատասխին նայելով, իրը թէ հրամանատարը այս երկրորդ անգամին իրենց կէս ժամ ժամանակ տուած էր ժողովը վերջացնելու համար, կէտ մ'որ հրամանատարը կուրանայ և որ անհաւական է։ Ինչ որ ալ լինի, հրամանատարը երրորդ անգամ ալ մտաւ եկեղեցին, բայց մտածատեն 5 կամ 6 հրացէն պարպուեցաւ, մէկ գլխուոր սպաննելով և երեք վիրաւորելով։ Թիւրքերը կասեն որ կրակ անողներն Հայերն էին և եկեղեցւոյ մէջնայող պատուհաններէն պարպուած են հրացէնները. բայց շատ և շատ Հայեր ալ կրակը կը վերագրեն Թիւրքերին թէեւ մի պատուաւոր և ազդեցիկ Հայ ինձ խոստովանեցաւ որ Թիւրքերն այդ ատեն ձեռնպահ կեցած էին։

(Շարունակելի)

ՊԱՐՈԿԱԿԱՆ ԴՐԱՄԱՏՈՒՆ

Մշակ լրագրին կը հաղորդեն որ Դավրէժի մէջ 20 հոգի պարսիկ վաճառականներ միանալով կազմած են մի առեւտրական պանքա, իւրաքանչիւրը իր սկզբնական դրամագլուխ դնելով 5000 ական թուման (մէկ թուման այժմ կարժէ 8 ֆրանքի չոմ)։ Այդ ընկերութիւն հրատարակած է պարսկերէն լեզուով իր կանոնագրութիւն և յայտարարութիւն։ Պարսիկ վաճառականների մէջ այդ առաջին ընկերութիւնն է որ կազմուած է։

ԾԱՆՈՒՑՈՒՄՆԵՐ

ՀԱՅ ՊԱՏՈՒԻՐԱԿՈՒԹԵԱՆ ՊԱՏԿԵՐԸ

1878ին Պէռլին գնացած հայ պատուիրակութեան պատկերը՝ գեղեցիկ թղթի վրայ ատնուած և պատուրակներուն անուններն հայերէն և ֆրանսերէն տառերով միանգամայն տպագրուած, կը ծախուի Արմենիա ի խմբագրատունը։ Գինն է 1 ֆրանգ, փոստի ծախքն խմբագրատունէն վճարուելով։

Հետեւեալ գիրքերն կարելի է ստանալ Արմենիայի խմբագրատունէն իրենց առջեւ նշանակուած գիներով և փոստի ծախքը խմբագրատունէն վճարուելով։

Արժէքը կանխիկ չվճարուած՝ գիրք չղրկուիր։

Նոր հրատարակութիւն

Թ

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ Մ. ՓՈՐԹՈՒԳԱԼԵԱՆԻ

«ԱՐՄԷՆԻԱ»Ի ՅՈՒՇԱՐԱՐ

Ա ՏԱՐԵԿԱՆ

(1885–86)

Շատեր կը փափաքէին ունենալ Արմենիայի Ա տարեշրջանի թիւերը. բայց որովհետեւ այդ թիւերը բոլորովին ըսպառած են, նոյն տարեշրջանի մէջ Մ. Փորթուգալեանի գրած առաջնորդող յօդուածներէն 30ի չափ ամիսուած են այս ցուցարարի մէջ, մի քանի թղթակցութիւններով մէկտեղ որոց մասին խօսուած է առաջնորդող յօդուածներուն մէջ։ Այդ յօդուածների մէջ կան «Տնտեսական հարցեր» (վանի տնտեսական վիճակը), «Թիւրքիան չուղեր լսել», «Ինչ պէտք է անել և ինչ կրնանք անել» (Ծայրայեղութիւն), «Եւրոպարնակ Հայերն և Կ. Պոլսի Պատրիարքարանը», «Պէտք է գծել մեր ծրագիրը», «Մեր ոյժեր համախմբելու մի առաջարկ», «Ինչո՞ւ չեն յաջողիր մեր գործեր», «Սխալ ժամանակներ» (վանի Պօղոս եպիսկոպոսի քարոզը որ խօսած է վանի Արարք թաղի եկեղեցւոյ մէջ 1885 մարտ 31ին), «Իգական սեռի ժամանակութիւնը հայրենասիրական գործին», «Հայ ժողովրդի և Թիւրք գործերի կռիւը վանի մէջ» (նամակ վանից) և այլն և այլն։

«Արմենիա»ի ցուցարարը իր ծառայարանով մէկտեղ կը բաղկանայ 124 երեսներէ, ութածալ դիրքի վրայ տպագրուած։ Գինն է Պարսկաստանի Հայերին համար 1 ֆրանք. ուրիշ տեղերի համար 1 ֆր. և 40 սնթմ.։

Փոստի ծախքը կը վճարուի հրատարակողէն։

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ Մ. ՓՈՐԹՈՒԳԱԼԵԱՆ

Ա. ՀԱՅ ԴԻՒՑԱԶՆՈՒՀԻ ՄԸ (սպառած)։
Բ. ՀԱՅ ԳԻՒՂԱՑԻ »
Գ. ՍԱՂՄՈՍ ԻՍՐԱՑԵԼԻ »
Դ. ԱԶԱՏՈՒԹԻՒՆ ՊՈՒԼՂԱՐԻՈՑ ԵՒ ԿԵՆՍԱԳՐՈՒԹԻՒՆՔ ՊՈՒԼՂԱՐ ԱՊՍՏԱՄԲԱՊԵՏԱՑ (Պուլղար ազգին իր ազատութիւն ձեռք բերելու համար մէկ դարէ ի վեր արած չանքերի խիստ հետաքրքրաշարժ նկարագրութիւնն է։) (1 ֆր. 10 սնթմ.) 1 ֆր. 50 սնթմ.
Ե. ՀԱՅԱՍՏԱՆԻ ԹՇՈՒԱՌՆԵՐԸ.—(Հայաստանցիների պանդխտութեան տխուր հետեւանքների մէկ փոքրիկ պատկերը կը ներկայացունէ վիպական կերպով։) Գին (90 սնթմ.) 1 ֆրանգ 20 սնթմ.
Զ. ԳԱՄԱՌ ԲԱԹԻՊԱ — ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԸՆԹԵՐՑԱՐԱՆ յետ այբուբենաց ատարեւլուհ. (Մեծանուն Հայ բանաստեղծին վերջերս գրած ազատաշունչ ընտիր ոտանաւորներէն 3ը՝ առանձին տետրակով հրատարակուած են)։ 50 հատը 2 ֆր. և 30 սանթիմ, հատը (5 սնթմ.) 10 սանթիմ։
Է. ԼԻՆԶԻ ՕՐԷՆԻՔ ՏԱՃԿԱՀԱՑԱՍՏԱՆՈՒՄ. (Սպառած).

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ Մ. ՓՈՐԹՈՒԳԱԼԵԱՆ

Ը

ԹԻՒՐՔԻԱՅԻ ՀԱՅԵՐՆ ԵՒ ԻՐԵՆՑ ԴՐԱՑԻՆԵՐ

ԳՐՔԷ Մ. Ա.

Թիւրքիայի Հայերին և իրենց դրացի Թիւրքերի, Քիւրդերի, Չերքէզների, Ասորիների, Եզիտիների, Դրուզներուն և այլ ազգերի վրայ վիճակագրական և ցեղաբանական ամփոփ և հետաքրքրական տեղեկութիւններ տրուած են այս տետրակի մէջ։ Թիւրքահայաստանի մէջ բնակող այլ և այլ ազգէ բնակիչներուն թուին մէկ բազդատական ցուցակը կցուած է տետրակին վերջը։ Գինն է 50 սանթիմ, փոստի ծախքը Արմենիայի խմբագրատունէն վճարուելով։ (Պարսկաստանի Հայերին համար 35 սանթիմ)։

Մ. Փորթուգալեանի հրատարակած գիրքերուն վրայ մանաւոր զեղչ կը լինի Պարսկաստանի Հայերին համար որոնց կը դրկուի փակագծի մէջ նշանակուած գիներովը։

ԾԱԽՈՒ ԳԻՐՔԵՐ

Հ. Ղ. Ալիշան — Պատկերազարդ Աղթարնագրութիւն Նոր Հայաստանի (Բազմահմուտ Հ. Ալիշանի աշխատասիրութեամբն հրատարակուած այս աշխարհագրութիւն որ մեծադիր և երկհիւան 105 երեսներէ բաղկացած է և գիւրահասկանալի պարզ գրաբար լեզուով գրուած, զարդարուած է 35ի չափ պատկերներով որոց մէջ կը գտնուին Վան քաղաքի, Վանի բերդի, Պայազիտի, Էջմիածնի, Անիի ջնջուած նշանաւոր աւերակներուն ևն. պատկերներն։ Գրքին վերջը կը գտնուի քարտէս Հայաստանի, այսինքն Մեծ Հայքի, բոլոր քաղաքներուն, բերդերի, գիւղերի, լեռներուն, գետերի մի ընդարձակ ցանկը ուր իւրաքանչիւրին առջեւ նշանակուած է թէ գրքին քանիերորդ տանը մէջ գրուած է անոր վրայ)։ Գին 5 ֆր. և 50 սնթմ.։

Ս. Հախումեան. ՄԱՆԻԿ (Մի ժամանակակից վէպ է որ կը պատկերացունէ ազգասիրական և ազգասէր պատանեքէ տանց իրենց կոչորդն անցուցները ուսումնարանների և եկեղեցիների փոխարէն և բարերարութեան դիմակի տակ դրուելի չարագործութիւններ աներեւոյթ)։ Գինն է 1 ֆրանք և 40 սանթիմ։

— ԳԷՈՐԳ ԱԲՈՎԵԱՆՑ. — Համառօտ պատմութիւն Հայոց ազգի պատմութեան (Բ տիպ. Տփղիս։) 2 ֆր.

— Հ. ԹԷՐՃԻՄԱՆԵԱՆ. — Համառօտ պատմութիւն Հայոց (6րդ տիպ. Վենետիկ)։ 2 ֆր. 50 սնթմ.

— Ծերեց։ — ԵՐԿՈՒՆՔ Թ ԴԱՐՈՒ (Ազգային անուանի վիպասան Ծերենցի գրած այս գիրք ցոյց կուտայ Թէ մահմէտականներն Թ դարին մէջ Հայաստան արշաւելով ինչ բարբարոսութիւններ կը գործէին այնտեղ, ինչպէս և կը գործեն այժմ նոյն իսկ ԺԹ դարին մէջ։ ԵՐԿՈՒՆՔը իբրև օրինակ ցոյց կուտայ ազգային գործիչներին Սասունցի Մհէջեան անուն մէկը որ իւր բարձր տեղերէ ազգային վերկութեան ակնկալելէ յետոյ, վերջապէս ժողովրդին մէջ կը փնտռէ ապատութեան ոյժը և անով կը յաջողի մի քանի յաղթութիւններ տանիլ թշնամիներին դէմ։) 3 ֆր. և 50 սնթմ.

— Խրիմեան Հայրիկ։ — ՎԱՆԳՈՑԻ (Ամեն. Խրիմեան Սրբազանի գրած արքատաշարժ, խրատական և ազատաշունչ տետրակը 1876ի Վանի հրդեհին ընկատմամբ)։ 70 սանթիմ։

Բ. Ց. Վարդուկեանց. ԴԱՅԼԱՑԼԻՒ Դրուագ Ա. (Հեղինակին յատուկ ոճն եղող ճարտար բանահիւսութեամբ և գրաբար լեզուով գրուած ոտանաւորներ են Աստուծոյ արարչագործութեան հրաշալիքներն պատմող)։ Գինն է 75 սանթիմ։

— Բաֆֆի. — ՍԱՄՈՒԷԼ (Բաֆֆիի հրատարակած ազգային վէպերի վերջինն է այդ որի նիւթը առնուած է Դ դարի Հայերի կեանքէն և որ, բացի իւր ներշնչած ազատասիրական զգացումներէ, հետաքրքրաշարժ տեղեկութիւններ կուտայ այն ժամանակի Հայերի բարքերին, սովորութիւններին և այլնի վրայ։) 10 ֆր.

— Հ. Ղ. Ալիշան — Նշմարք եւ Նշխարք Հայաստանի Ա, Բ և Գ պրակները (Հայաստանի հետաքրքրական տեղերէն և քաղաքներէն 36ին լուսանկար պատկերները զետեղուած են Նշմարքի 3 պրակներուն մէջ, անոնցմէ իւրաքանչիւրին վրայ պատմական և աշխարհագրական հմտալից տեղեկութիւններով, աշխարհաբար լեզուով գրուած Վեր. Հ. Ղ. Ալիշանէն)։ 3 պրակներն միասին 26 ֆր. և 50 սնթմ.

ՏԵԱՐՔ ՄՕՐՈՅ ԵՒ ԸՆԿ. ՍԵՂԱՆԱՒՈՐՔ

426 Մէյն, Փիգգինր փողոցի անկիւնը ՈՒՍԹԸՐ (Worcester Mass. U. S. America)

Սոյն գրամատան դիմաց Հայերը՝ Կ. Պոլսոյ և Փարթերդի մէջ անպղտիական և գաղտնական ասկիով վճարելի փոխանակագիր կրնան ստանալ յոյժ չահաւոր պայմաններով։

Փորձեցէք և գոհ պիտի ըլլաք։

ՏՆՕՐԷՆ—ԽՄԲԱԳԻՐ
Մ. ՓՈՐԹՈՒԳԱԼԵԱՆ
Le Gérant : FÉLIX ENFFANTIN.

ՄԱՐՍԷԼ

Հայերէն տպարան Մ. Փորթուգալեանի
Marseille. — Imprimerie et Papeterie du Midi, Allées de Meilhan, 44.